

Ներկայում
Գրական կրթությունը
ընդհանուր պետություն
հասցրեց հիմնական ճանաչողության

W

W

W

W

01.542.09

Ա-13

Հայ Գրողների Կովկ. Ընկերության № 3

ԳՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՒՆԵՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Հայոց Հին Բանաստեղծութեան

ԴԱՍԵԽՕՍՈՒԹԻՒՆ

ՄԱՆՈՒԿ ԱՐԵՂԵԱՆԻ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Կ. Ազոնեանցի, Պոլիս, 7

1917

6 NOV 2017

891.99.09

4513

Հայ Դրողների Կովկ. Հնկերութիւն № 3

ԳՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՒՆԵՐ

Կ.Ո.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ 287

Հայոց Հին Բանաստեղծութեան

Դ.Ա.Ս.Ա.Կ.Ս.Ս.ՈՒԹԻՒՆ

ՄԱՆՈՒԿ ԱՐԵՂԵԱՆԻ

ԹԻՖԼԻՍ

Տպարան Ն. Աղանեանցի, Պոլից. 7

1917

13
2

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ՀԻՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ

Տիկիւններ և Պարոններ.

Հայոց հին բանաստեղծութեան զարգացման ընթացքը պարզելուց առաջ, հենց սկզբից, պէտք է ասեմ, որ դեռ նոր են սկսում հետաքրքրուել մեր հին գրականութեան այդ ճիւղով. բնագիրները մեծ մասամբ միայն վերջին տասնամեակներում են տպագրուել, մի քանիսը նոյն իսկ վերջին տարիներս են երևան եկել: Կան և չտպագրուածներ, անշուշտ նաև անյայտներ: Այսպիսի դրութեամբ, հասկանալի է, կարելի չէ մեր հին բանաստեղծութիւնը ճիշտ գնահատել և նրա տեսութիւնը բազմակողմանի, լիակատար և վերջնական անել: Այսինքն մեր հին բանաստեղծութիւնն, և առհասարակ հին գրականութիւնը, ճիշտ գնահատելու համար, պէտք է նկատեմ հետեւեալը. մենք դեռ բոլորովին չենք ազատուել այն գիտական սխալ ժամանակագրութիւնից, որով Հայկ Նահապետին, ուրեմն և հայ ազգի սկիզբը դնում են Քրիստոսից երկու հազար և աւելի տարիներ առաջ և հայերին համարում աշխարհի հին, նոյն իսկ հնագոյն ազգերից մէկը: Այդ սխալ հաշիւը մի անգամ ընդ միշտ մի կողմ պիտի դնել: Արդարև, Քրիստոսից մի հինգ դար առաջ յիշուում է հայ անունը, բայց մենք գրական-պատմական կեանքի շրջանը մտնում ենք միայն 5-րդ դարի սկզբում Քրիստոսից յետոյ. 5-րդ դարից առաջ մենք չունինք հայոց լեզուով յօրինուած ոչ մի յիշատակարան և ոչ նոյն իսկ հայոց լեզուի բառեր, բացի այլազգի հեղինակների յիշատակած մի քանի յատուկ անուններից:

Մի անգամ որ մեր ազգն ու իր գրականութիւնը նոր են, կընշանակէ՝ մեր գրականութիւնն իր ընթացքով նոր ազգերի հին գրականութեան հետ համեմատութեան պիտի

2000
ԴՄ

առնուի. մեր հին բանաստեղծութեանը պիտի մօտենանք նոր, քրիստոնեայ ազգերի հին բանաստեղծութեան յատկա-
շափով և ոչ թէ հին, հեթանոս ազգերի: Այսպէս, օրինակ,
մեր հին բանաստեղծութեան համար պիտի նկատի ունենալ
հին Փրանսիական, հին և միջին բարձր գերմանական բա-
նաստեղծութիւնը և բիւզանդական շրջանի յունական գրա-
կանութիւնը: Այս ղէպքում, հենց սկզբից ասեմ, չնայելով
որ շատ բան կորած է մեր չարաղէտ բախտի պատճառով
կամ դեռ չի յայտնուած, եղածն էլ դեռ լաւ կամ բնաւ չի
ուսումնասիրուած, բայց և այնպէս ոչ միայն մեր հին գրա-
կանութիւնն ընդհանրապէս, այլ և մեր հին բանաստեղծու-
թիւնը մի պատուաւոր տեղ կարող է բռնել քրիստոնեայ
ազգերի հին գրականութիւնների մէջ: Մեր բանաստեղծու-
թիւնը զուգընթաց և երբեմն նոյն իսկ աւելի վաղ է դար-
գացել, քան եւրոպական նոր ազգերինը: Դրա հիմքն ամե-
նից առաջ պէտք է որոնել գլխաւորապէս մեր ցեղական
բնաւորութեան մէջ: Ուստի առաջին հարցն է, թէ ինչ էր
կրում հայ ցեղն իր մէջ մեր գրականութեան սկզբում:

1.

Մեր ազգն իր լեզուով պատկանում է հնդեւրոպա-
կան մեծ ցեղի եւրոպական խմբին, թրակիա-իլլիրական
ընտանիքին: Ընդունում են, որ մեր ցեղն եւրոպայից է
անցել արեւելք: Թէ երբ և ինչ ճանապարհներով և ճանա-
պարհներին ինչ ազդեցութիւններ կրելով՝ նա Մակեդոնիա-
յից դիմել է դէպի Հայաստան և ինչպէս բռնել Հայաստա-
նի հին բնակիչների, արդէն որոշ աստիճանի մշակոյթ ու-
նեցող Ուրարտացիների տեղը, — այդ մասին դեռ հաստա-
տուն տեղեկութիւններ չունինք: Կարելի է միայն ընդունել,
որ եկւոր հնդեւրոպական ցեղն իր պատմական հայրենի-
քում իր մէջ առել է շատ տեղական տարրեր. որով և մեր
ցեղը կաղմուել է եւրոպականի և ասիականի, աւելի ճիշտ,
կովկասեանի խառնուրդով:

Անպայման նա ազդուած է հին Ուրարտական քաղա-
քակրթութիւնից, բայց այդ դեռ վերջնապէս պարզուած չէ:
Ասորական և պարսկական ազդեցութիւնները,

սակայն, որ հայերը կրում են այս հին ժամանակներում,
բաւական պարզուած են: Այդ ազդեցութիւններն արդէնք
են այն պատմական հանգամանքի, որ հայերը բռնելով Ու-
րարտացիների երկիրը՝ հնագոյն ժամանակներում արդէն
սերտ յարաբերութեան մէջ են մտնում հարաւային սեմա-
կան ազգերի հետ և ապա շուտով ենթարկւում են Մարաց
գերիշխանութեանը. իսկ Պարսից Աքեմենեան տէրութեան
սկիզբներում՝ Մարաց բոլոր կալուածների հետ մտնում են
Պարսից իշխանութեան տակ: Հայ ազգի անունը առաջին
անգամ յիշատակւում է 6-րդ դարի վերջերում Ք. ա., Դա-
րեհ թագաւորի դէմ վարած պատերազմների պատճառով:

Այս ժամանակներից սկսած մինչև 5-րդ դարը Ք. յ.
հայերն ապրում են մի կիսապատմական շրջան, որ շատ
կարևոր նշանակութիւն է ունեցել հայ ազգի կաղմութեան
համար: Աքեմենեան և Մակեդոնացոց տիրապետութեան
ժամանակ, հայ ցեղը խաղաղ շինարարութեամբ հետզհետէ
աւելի ընդարձակւում է դէպի հիւսիս և արեւելք իր բնա-
կութեան սահմանները, տեղի է ունենում հայ տոհմերի
միացումը, և առաջ է գալիս հայութիւնը մի ամբողջութեան
գիտակցութեամբ: Սկսւում է մի հոգևոր հաղորդակցու-
թիւն. միաժամանակ և նոյն իսկ, զոհէ բարձր դասակարգի հա-
մար, խնամիական յարաբերութիւն պարսիկների հետ, ու-
րոնք համեմատաբար աւելի բարձր մշակութիւն ունէին,
որոնցից և զօրեղ ազդեցութիւն են կրում հայերը նկատ-
մամբ լեզուի, բարբերի ու սովորութիւնների, պետական,
քաղաքական կարգերի ու կենցաղի, կրօնական աշխարհա-
յեցողութեան, աստուածների պաշտամունքի, և հաւատալիք-
ների ու նրանց հետ կապուած բազմաթիւ զրոյցների և ա-
ռասպելների (Վիշապաքաղ Վահագնի, Վիշապների, դեերի,
դժոխքի և այլն մասին): Այս ազդեցութիւնը, որ տևել է
մինչև Արաբացոց տիրապետութիւնը, այնքան զօրեղ է և-
ղել, որ մինչև այժմ էլ դեռ ամենամեծ չափերով ապրում է
թէ մեր լեզուի և թէ ժողովրդական հաւատալիքների մէջ:
Հայ ցեղն, այսպէս ասած, իրանացիանում է այն աստիճա-
նի, որ մի երեսուն տարի առաջ հայերէնը դնում էին հընդ-
եւրոպական լեզուների իրանական ճիւղի մէջ:

Նոյնպէս ազգեցութիւն կրել են հայերը և հարաւային սեմական ազգերից՝ յատկապէս ասորիներէից Այս ազգեցութիւնն աւելի զօրեղացած է այն ժամանակ, երբ Հայաստանի հարաւային և արեւմտեան սահմանների, (Եկեղիք, Ծոփք, Սասուն, Արզն), ինչպէս և Վանայ ծովի հարաւային կողմերի ասորիները, ենթարկուելով հայոց քաղաքական ազդեցութեանը, սկսած 2-րդ դարից Ք. ա. հետեւող հայացել են: Դրանք իրենց արիւնի հետ հայութեան մէջ բերել են նաև իրենց համեմատաբար բարձր մշակոյթը՝ իրենց աստուածներն ու պաշտամունքը, հաւատալիքներն ու զրոյցները (Արա Գեղեցկի և Շամիրամի առասպելը) և այլն: Ասորական այս ազգեցութիւնը յարատեւում է մինչև քրիստոնէութիւնը և նոյն իսկ քրիստոնէութեան ժամանակ 4-րդ և 5-րդ դարերում աւելի զօրանում է:

Այս արեւելեան ազգեցութիւններից շատ ուշ հանդէս է գալիս հելլենական ազգեցութիւնը Մակեդոնացոց և Սելևկիացոց շրջանում և այնուհետև յարատեւում է գրեթէ մինչև Բիւզանդական կայսրութեան անկումը: Մեծն Տիգրանն առանձնապէս ձգտել է յունական մշակոյթը պատուաւորել հայոց մէջ. և այդ գնալով՝ աւելի զօրանում է Հռոմայեցոց իշխանութեան միջոցով. իսկ 3-րդ դարի վերջից սկսած քրիստոնէութեան հետ հաստատում է Հայաստանում այն աստիճանի, որ հայերը, մինչ հեթանոսութեան շրջանում հակուած էին դէպի արեւելեան ազգերը, հետզհետէ սկսում են հակուել դէպի արեւմուտք: Շուտով յոյն լեզուի ուսումնի և յունական կրթութիւնը ծաւալում է, մինչև որ վերջապէս մի կենդանի մտաւոր հաղորդակցութիւն է լինում հայերի և յոյների մէջ, և հայերն անհրաժեշտ են համարում յունական եկեղեցու հայրերի, այլ և ուրիշ գրուածքներ թարգմանել հայերէն: Եւ այս արդէն 5-րդ դարից, երբ ստեղծւում է հայ գրականութիւնը:

Այսպէս ահա այսպիսի ազգեցութիւններով կազմակերպւում է հայ ազգը՝ իր բնաւորութեան էական յատկանիշներով, որ արդիւնք են իր երկտասարդական կեանքի: Նրա մէջ արեւմտեան արիւնի հետ

խառն է արեւելեան արիւն, և նա արեւելեան մեծ ազգեցութիւններ կրելով՝ միաժամանակ և արեւմտեան յունական ազգեցութիւնն է կրում, և հին ժամանակներից մինչև այսօր թեքուած է մնում դէպի քրիստոնեայ արեւմուտքը, մանաւանդ որ նա արեւելքում եղել է միակ մեծ քրիստոնեայ ժողովուրդը ընդդէմ զրադաշտականութեան և մահմեդականութեան: Օտար խառնուրդներ և ազգեցութիւններ կրելով նախադրական շրջանում՝ հայ ցեղն իր բնաւորութեամբ աւելի ճկուն է դառնում, նորասէր, ընդունակ նմանելու և իւրացնելու նոր գաղափարներ, օտար բարքեր և նոյն իսկ լեզուներ: Հայ ցեղի այս յատկանիշը այլասեռութեամբ հայ տիպի մէջ ծայրայեղութեան է հասնում և տանում է դէպի ինքնուրացումը, որով և այլազգիների և նոյն իսկ մեր աչքին ստորանում է և անարգանքի առարկայ դառնում. բայց (գտարիւն) հայ տիպի մէջ օտարին նմանելու այս յատկանիշը դառնում է յառաջադիմութեան աղբիւր. որովհետև դրանով նա չի կորցնում իր ինքնուրոյնութիւնը, այլ ընդհակառակն օտարից ընդունածն իւրացնելով՝ նոր առանձնայատուկ կերպով զարգացնում է այն: Եւ այս տեսնում են քամենահին ժամանակներում, նոյն իսկ մեր հեթանոսական կրօնի մէջ: Եւ որովհետև ցեղի մի ուրիշ էական յատկանիշն է խաղաղ շինարարութիւնը, որից առաջանում է նրա տոկուն կենսունակութիւնը, ուստի նա կարողանում է հեշտութեամբ նորոգել կուլտուրական աւերումները, որ յաճախ ունեցել է նա, և ընկած դրութիւնից արագ բարձրանալով հասնել ուրիշ յառաջադէմ ազգերին: Այս յատկանիշը շատ կարևոր է, որովհետև մեր գրականութիւնը յաճախ արդիւնք է մեր այս յատկանիշի:

Սկզբնական շրջանում սակայն օտարների ազգեցութեամբ ազգային յառաջադիմութիւնը միայն աւելի արագանում է, մինչև որ հայ ցեղը բարբարոսական դրութիւնից կամաց կամաց բարձրանում է և կազմակերպւում իբրև մի ուրոյն ազգութիւն: Նա 2-րդ դարի սկիզբներում արդէն Ք. ա. իր մէջ ոյժ է զգում հանդէս գալու իբրև անկախ մեծ պետութիւն, պատրաստ աւելի ևս զօրանալու և իր մէջ թաքցնելով ոյժերն երևան բերելու. բայց զժախտաբար հենց

սկզբից նա ենթարկուում է իր ֆնայուն ճակատագրին: Դեռ նոր Մեծ Հայաստանը կազմած, առանց կարողանալու Փոքր Հայաստանն էլ նոյն քաղաքական միութեան մէջ առնելու, նա ընդհարուում է երկու զրացի աւելի մեծ և ուժեղ և մըշակոյթով աւելի բարձր տէրութիւնների հետ, Պարթևաց և Հռոմայեցոյ: Մեծն Տիգրանի տէրութիւնը երկար կեանք չի ունենում, և այնուհետև երկար ժամանակ, և յաճախ կրկնուելով նոյնը, մինչև այսօր մեր երկիրն ու ժողովուրդը ֆնում են արեւելեան և արևմտեան երկու մեծ պետութիւնների մրցման, կռիւների և ազդեցութիւնների ասպարէզ:

2.

Պարոններ, մեր ազգային կեանքի այս հին, նախազերական շրջանը մի իսկական վիպական դիւցազն ապաւան ժամանակամիջոց է, երբ Արտաշատ քաղաքի հիմնարկութիւնից (180 թ. Բ. ա.) մինչև Արշակունեաց հարստութիւնը (66 թ. Բ. յ.) և ապա մինչև 4-րդ դարի վերջերը, կատարուում են մեծամեծ գործեր, որոնք զօրեղ տպաւորութիւն թողնելով ինքագիտակցութեան եւ կած հայ ժողովրդի երևակայութեան վրայ՝ առաջ են բերում բազմաթիւ պատմական երգեր, զրոյցներ ու աւանդութիւններ: Այդ ժամանակ հիմնուում են հայ թագաւորութիւններ ու քաղաքներ, փոխուում են հարստութիւններ, իրար հետ բախուում են մեծ տէրութիւններ, և Հայաստանը դառնում է երկարատև պատերազմների վայր: Դարեր շարունակ խաղաղ ու միակերպ ապրելուց յետոյ՝ հայ ժողովուրդն ապրում է իսկապէս մի եռուն դիւցազնական շրջան, որի պատմական նշանաւոր անձերն ու ղեկավարները—Արտաշէս Ա. իր հիմնած թագաւորութեամբ, Մեծն Տիգրանն իր անձով և բախտով, միւս Արտաշէսները ու Արտաւազդները և Տրդատ Ա. իր նախորդներով—նիւթ են դառնում ժողովրդական վէպի ու զրոյցի և երգում մեր հին երգիչներից: Եւ այսպէս 2-րդ դարում Բ. ա. հիմք է դրում հայ բանաստեղծութեան իր ինքնուրոյն բնաւորութեամբ, մի բանաստեղծութիւն որ կապուած է եղել հայ ազգի պատմական կեանքի հետ և դրանից բխելով՝ նրա այդ կեանքն

և իդէալներն է պատկերացրել իր մէջ: Արդարեւ դրանից առաջ էլ եղել են երգեր, շատ զրոյցներ և առասպելներ (Հայկի առասպելը, Արա Գեղեցիկ և այլն), բայց դրանք ունեցել են աւելի ընդհանուր բնաւորութիւն, և շատ քիչ պատմական ազդեցութիւն են կրել: մինչդեռ այս նոր երգերն ու զրոյցները հայ կեանքի արդիւնքն ու ստեղծագործութիւնն են միայն և մեր ազգային նախնական բանաստեղծութիւնը:

Այս ամենը սկզբում, հարկաւ, շատ տարբերակն և անարուեստ մի ձևով է եղել, պարզ ու միամիտ մի բանաստեղծութիւն, փոքր քերթուածներ բնական դրութեամբ, երգեր ու զրոյցներ հերոսների քաջագործութիւնների մասին, պատմական երգեր, որոնց մէջ պատմուած են եղել տոհմերի ծագումը (Արծրունեաց և Մամիկոնեանց), քաղաքների հիմնարկութիւնը (Արտաշատի ու Վաղարշապատի), կռիւներ և այլն: Այս ամենը, սակայն, եղել է ժողովրդական վէպ կամ վէպի տարերքը, ազնուական բնաւորութեամբ, որովհետև ազնուական դասակարգի արտադրութիւնն էր: Սկզբում միայն անջատ վիպական երգեր և աւանդութիւններ են եղել, բայց ժամանակի ընթացքում, վիպական ոգու մի ընդհանուր յատկութեամբ, դրանք միանալով իրար և նախորդ դարերից ժառանգած առասպելների ու զրոյցների հետ, որոնք մասամբ փոխառութիւն են պարսիկներից ու ասորիներից, մի ամբողջութիւն են առաջ բերած, կազմելով պատմական-առասպելական երգերի ու զրոյցների երկու մեծ շրջան. նախ՝ Հայոց վիպասանութիւն, երգը առասպելաց կամ Վիպասանաց (այլ և Թուեւեաց), որի կեդրոնն եղել են Մեծն Տիգրանն և Արտաշէսը, և ապա՝ մի երկրորդ մեծ շրջան ևս, որ կոչելու է «Պարսից պատերազմ», որի մէջ պատմուել է հայերի կռիւը Սասանեանց դէմ մինչև 4-րդ դարի վերջերը: Այս երկու վիպական շրջանները, մանաւանդ առաջինը, — մի քանի ուրիշ առասպելների հետ Հայկ դիւցազնի, աստուած Վահագնի, Տուրք Անգեղի և ուրիշների մասին, — շատ վաղ սկսուել են մշակուել արուեստաւոր երգիչների ձեռով, առաջ բերելով գաղափարական տիպեր, որոնց մէջ առանձին ուշագրութեան է արժանում գեղեցիկ

և ուժեղ մարմինը, փառաբանում է արութիւն, քաջութիւն, հայրենասիրութիւն և այլ բարոյական յատկութիւններ:

Այս վիպական բանաստեղծութեան հետ եղել է նաև քնարական բանաստեղծութիւն, որը, սակայն, մնացել է շատ երկար ժամանակ իր բնական վիճակի մէջ անմշակ, նման մեր արդի ժողովրդական պարերգերին, որոնք փոքրիկ երգեր են 2--4 տողից կազմուած, որոնք և բանաստեղծութեան նախնական ձևն են կազմում բոլոր ազգերի մէջ: Հին ժամանակներից սկսած մեր այդ երգերի մէջ երկու տեսակն են տարբերում, նախ՝ ուրախութեան երգեր, որոնց մէջ մտնում են հարսանքի, խրախճանքի և լոկ պարի երգեր, և ապա՝ ւալեաց բանաստեղծութիւն կամ կոծի երգեր, որ յուղարկաւորութեան երգեր էին: Երկու տեսակն էլ միացած են եղել պարի ու նուագի հետ (գործինները՝ փող, վին, փանդիւ), բայց իրենց բնաւորութեամբ և բովանդակութեամբ խիստ տարբեր են եղել: Առաջին կարգի երգերն ունեցել են շատ զուարթ և արձակ բնաւորութիւն, կապուած աշխարհային վայելքի հետ, զինելով և պար ու կաքաւի հետ, դրա համար և մեր պատմագիրները ուրախութեան երգերը կոչում են անարգանքով՝ «արեցութեան երգեր», «հեթանոսական երգեր», իսկ պարերը «լիտի կաքաւներ»:

Նոյն անարգանքին և նոյն իսկ հալածանքին ենթարկուել են եկեղեցու կողմից նաև լալեաց բանաստեղծութիւնները, որ յօրինում էին յուղարկաւորութեան համար և յաճախ նոյն իսկ յուղարկաւորութեան միջոցին: Մեռելների թաղելիս առանձին հանդէսներ ու ձէսեր էին կատարում դիակի շուրջը տղամարդկանց և առանձին ողբառաց կանանց խմբերով, որոնց պարագլուխ էր հանդիսանում մեռելի կինը: Նուագելով փող, վին և փանդիւ՝ երգում, ծափ էին տալիս, պարում էին «արք և կանայք պղծութեամբ ձիւաղութեամբ պարուք դէմ ընդ դէմ հարկանելով», բարձրաձայն կոծալով ու ձգալով: Այս երկրորդ տեսակի երգերը, թէպէտ աշխարհի վայելչութիւնից շատ հեռու, բայց դարձեալ կապուած էին այս աշխարհի կեանքի հետ, որից

յաւիտեան զրկւում էր մեռելը, որի համար և անյուսութեամբ ողբում էին:

3.

Տիկիւններ և Պարոններ, այս հին երգն ու վիպասանութիւնը պիտի կազմէին հիմունքը մեր ապագայ գրաւոր բանաստեղծութեան, որի մէջ պիտի ցոլար հայ ազգի յատուկ հանճարը, եթէ միայն մեր գրականութիւնը շարունակուէր բնական ճանապարհով ընթանալ և զրի միջոցով ազնուականի ձեռով մշակուէին մեր այս հին ազնուական բանաստեղծութեան տեսակները: Բայց մեր ազնուականութիւնը սնանկ գտնուեց: Մեր գրականութեան սկզբում ազնուականութեան հետ կար սակայն մի նոր հարուստ, զօրեղ դաս՝ եկեղեցականութիւնը, որ աւելի զարգացած էր և իր անձնական փառասիրական ձգտումներից յետոյ՝ հոգում էր եկեղեցու համար: Ուստի նա կարիք զգաց գրի ու գրականութեան, և ոչ թէ ազնուականութիւնը, որ չկարողացաւ կենսունակութիւն ցոյց տալ: չկարողացաւ ոչ միայն բարձրանալ, այլ նոյն իսկ ազգային անկախութիւնը պահպանել, մինչդեռ մեր եկեղեցականութիւնն ընդհակառակն, ոչ միայն քրիստոնէութեան վտանգուած գոյութիւնը պաշտպանեց, այլ և ազգային ինքնուրոյն եկեղեցի կազմեց:

Մեր գրականութիւնն ուրեմն սկզբում եկեղեցական էր ընդհանուր եկեղեցական գրականութեան բոլոր տեսակներով: Նա ծնուեց բուն եկեղեցական նպատակների համար, որոնցից առաջինն ու զլիաւորն էր հեթանոսութեան տեղափոխումը քրիստոնէութիւնը: Եւ որովհետեւ մեր հին ազնուական բանաստեղծութիւնը հեթանոսական ժամանակներից գալով բնականաբար շատ հեթանոսական գաղափարներ ու հաւատալիքներ և կեանքի զուարթ աշխարհայեցողութիւն էր բովանդակում, ուստի նա յետ պիտի մղուէր եկեղեցականութիւնից: Եկեղեցականը չի մշակում այն, քանի որ քրիստոնէութիւնն եկած էր այդ ամենը ոչ թէ պահելու և դարգացնելու համար, այլ ոչնչացնելու և տեղը մի նոր հոգևոր կեանք ստեղծելու համար, և իր ճգնաւորական ոգւով

նոյն իսկ աշխարհն ու երկրաւոր կեանքն ու բանալու յա-
նուն մի երկնաւոր հանդերձեալ կեանքի: Եթէ յոյների մէջ
անգամ հետզհետէ յետ պիտի մղուէին և մոռացութեան
տրուէին հին կլասիկական բանաստեղծութիւնն ու փի-
լիսոփայութիւնը և մի բոլորովին նոր եկեղեցական գրակա-
նութիւն առաջ գար,— որքան ևս աւելի մեր մէջ: Մեր հին
գրագէտ եկեղեցականը, որ յունական ուսում ունէր, ոչ
միայն իբրեւ եկեղեցական թշնամական վերաբերմունք ու-
նէր դէպի ազգային հին բանաստեղծութիւնը, այլ նա այդ
գնահատել էլ չէր կարող. կամ ճիշտն ասած՝ շատ անարժէք
բան էր համարում, որովհետեւ, այսպէս կամ այնպէս, այդ
հին առասպելներն ու երգերը արեւելեան շատ բան ունէին
իրենց մէջ, ձևով անկատար էին և հեռու յունական պայծա-
ռ ոգորկ առասպելներէն», ինչպէս գրում է Մ. Խորենացին:
Այս պատճառով մեր հին մատենագիրները արհամարհում
են ոչ միայն օտարազգի արեւելեանը, այլև բուն ազգային
ժողովրդականը. ուստի նոյն իսկ շատ քիչ տեղեկութիւն-
ներ են տալիս մեր հին բանաստեղծութեան մասին. և եթէ
դրանից օգտւում են, այդ էլ միայն պատմագիրները ծա-
ռայեցնելով այն իբրեւ աղբիւր հին, նախազրական դարերի
հայոց պատմութեան, և առաջ բերելով մի գրական տեսակ,
որ ձևով պատմութիւն է, իսկ նիւթով ոչ պատմութիւն և
ոչ բանաստեղծութիւն:

Եւ ոչ միայն այդ:

Եկեղեցական գրականութիւնը ստեղծւում էր միայն
նորա համար, որ մեր հին վիպասանութեան և առասպելնե-
րի տեղը բռնէին Ս. Գրքի պատմութիւնն ու ըն-
դհարեալ իսկ հին ուրախութեան երգերի և լալեաց բանաստեղծու-
թեան տեղը բռնէին հրէական օրհնութիւնն ու եր-
ն ու սաղմոսն ու երգ: Մեր թարգմանիչներն աշխատում
էին հենց դրա համար: Մարդիկ ուրեմն ձգտում էին կտրուել և
կտրուում էին իրենց հին հայրենական աւանդութիւններից
և կապւում մի նոր օտար աւանդութեան հետ. հայ իրական
կեանքը դառնում էր շարունակութիւն ոչ թէ հեթանոս հայի
անցեալի, այլ հրէից, Ս. Գրքի. իսկ դա նշանակում է, ժա-
մանակակից Կորինթի խօսքերով, «գերել զամենեսեան ի

հայրենեացն «աւանդելոց», «ի բաց այնչափ անշատելի հայ-
րենեաց իւրեանց և անյիշատակ ցուցանել, մինչ ասել իսկ
թէ մոռացայ զժողովուրդ իմ և զտուն հօր իմոյ»:

Այսպէս ահա մեր գրականութեան սկզբում հենց բաց-
ւում է մի խոր վիճ մի կողմից՝ սկզբնական բուն հայ ան-
գիր բանահիւսութեան մէջ, որ ինքնուրոյն էր և ցոլացնում
էր իր մէջ ազգային կեանքը, և միւս կողմից՝ նոր գրաւոր
բանահիւսութեան մէջ, որ չունի ինքնուրոյնութիւն և
կապւած չէ ընդհանուր ազգային կեանքի հետ, այլ միայն
Ս. Գրքի հետ և ազգային եկեղեցու կեանքի հետ և չի լի-
նում առաջինիշարունակութիւնը: Բայց ինչքան էլ աղնուա-
կանութիւնն ենթարկուէր եկեղեցականութեանը, դարձեալ
հին բանաստեղծութիւնը չէր կարող հեշտութեամբ մոռա-
ցութեան տրուել: Աշխարհականը, աղնուական թէ ոամիկ,
— որոնք այդ դարերում մտաւորապէս շատ չէին տարբեր-
ւում միմեանցից և միշտ էլ սիրով լսել և պատմել են ա-
րեւելեան առասպելները, — երկար ժամանակ դեռ պահում է
իր սեպհական բանահիւսութիւնը: Եւ այսպէս մեր բանաս-
տեղծութեան մէջ, մեր գրականութեան սկզբում հենց, եր-
կուութիւն է մտնում: Մէկն աշխարհաբան բանաս-
տեղծութիւնն է, շարունակութիւն հեթանոսականի,
աւելի արեւելեան բնաւորութեամբ, որ ազգի ընդհանրու-
թեան հետ հետզհետէ քրիստոնէական բնաւորութիւն է ըս-
տանում, երկար դարեր ենթակայ է արհամարհանքի և նոյն
իսկ թշնամական վերաբերմունքի, ապրում է միայն ան-
գիր աւանդութեամբ, դրա համար էլ դրանից շատ քիչ բան
է մնացած և հասած ազգային և դժբախտաբար այդ քիչն
էլ դեռ ուսումնասիրուած չէ: Միւսը եկեղեցական
բանաստեղծութիւնն է, հակուած դէպի արեւմուտք,
այն բնաւորութեամբ, որ ունի եկեղեցական բանաստեղծու-
թիւնն ընդհանրապէս քրիստոնեայ ազգերի մէջ. դա առան-
ձին սիրով մշակւում է արտադրելով մեծ թուով երկեր, ուստի
և յայտնի է իր հարստութեամբ, բայց մեր ազգի աւերմունք-
ների պատճառով դրանից էլ շատ բան կորստի է մատ-
նուած, և մնացածն էլ դեռ նոր է ուսումնասիրութեան ա-
ռարկայ դառնում:

Մեր այս երկու տեսակ բանաստեղծութիւններն երկար դարեր իրենց առանձին ճանապարհով են առաջ գնում. բայց ինչքան էլ միմեանցից տարբեր են, իրարուց բոլորովին անկախ չեն: Եթէ եկեղեցին վերջ ի վերջոյ իր ոգին մտցնում է հայ ժողովրդի մէջ և ազդում է նոյն իսկ ժողովրդական բանաստեղծութեան վրայ, — աշխարհիկ բանաստեղծութիւնն էլ մէկ մէկ իրեն զգալի է դարձնում հին ժամանակ պատմագրութեան, ապա և այլ գրական տեսակների մէջ, որ բանեցնում են հոգևորականները:

Բացի այդ՝ մենք տեսնում ենք, թէ ինչպէս հին վիպասանութիւնը և առասպելաց երգերը դարեր շարունակ յարատեւել են. ապա 5—7-րդ դարերում ստեղծուել է մի նոր վիպական զրոյցների շրջան, ինչպէս «Տարօնոյ պատերազմն» է. վերջապէս 9—13 դարերում կազմուել է նոյն իսկ մի առանձին վիպական զրոյցների շրջան և ժողովրդական վէպ, որ սկզբում ունեցել է տեղական բնաւորութիւն, ապա տարածուել է շատ կողմեր և յարատեւել մինչև մեր օրերը: Դա մեր արդի ժողովրդական վէպն է՝ «Սասնու ծռերը», որ իր էութեամբ արդէն հաստատուն կերպարանք է ստացած եղել մինչև 14-րդ դարը: Այդ վէպերի մէջ փառաբանում է հայ ազգի դարաւոր կոիւր, որ նա վարել է թշնամի ազգերի և հրոսակների դէմ, սկզբում պարսիկների, ապա արաբների և եգիպտացիների դէմ, մըշակել են նոր գաղափարական տիպեր, գլխաւորապէս հայրենասիրութեան, քաջութեան և ազատութեան:

Նոյն ձևով երբեք մոռացութեան չեն տրուել նաև քրնարական տեսակները՝ ուրախութեան և լալեաց բանաստեղծութիւնները, որոնք նոյն իսկ աւելի բախտաւոր են եղել նրանով, որ շատ աւելի են ազդել հոգևորականի ստեղծագործութեան վրայ: 11-րդ դարի սկզբում անգամ հին լալեաց բանաստեղծութիւնն առանձին ձևով զարգացած է եղել, և Գրիգոր Նարեկացին իր Ողբերգութեան մէջ նոյն իսկ նմանում է այդ բանաստեղծութեանը. և, եթէ կուզէք, մեր հին բանաստեղծութեան մէջ սիրուած ողբերն ու ողբերգութիւններն իրենց սկզբնական աղբիւրն ունին այս հին քնարերգական տեսակի մէջ, ինչպէս և ուրախութեան

և սիրոյ երգերը ծագում են հին ուրախութեան երգերից: Եւ մեր հին բանաստեղծութեան զարգացման ընթացքը հետաքրքիր է գլխաւորապէս այս երկսի յարաբերութեամբ և փոխադարձ ազդեցութեամբ:

Մենք տեսնում ենք, թէ ինչպէս մեր բանաստեղծութիւնն իր Առաջին շրջանում, մինչև 11-րդ դարը, միայն մի նպատակի է հետևում՝ պահպանել և տարածել ուղղափառ քրիստոնէական ուսումը երգի միջոցով և առաջացնել կրօնական եռանդ և աշխարհաւրացութիւն քրիստոնէական մտքով և ապա՝ թէ ինչպէս Երկրորդ շրջանում, 11—17-րդ դարերում, սկսում է մի տեսակ վերածնութիւն հեթանոսականի, մրցում երկրի և երկնքի, մարմնի և հոգու մէջ. մարմինն իր իրաւունքն պահանջում. ժողովրդական, աւելի ճիշտ, աշխարհիկ տարրը մտնում է գրականութեան մէջ, ծնւում են նոր քնարական տեսակներ, նոր լեզուով յօրինուած, մինչև որ վերջապէս մարմինը, հոգու դէմ կռիւը շարունակելով, 16—17 դարերում կատարեալ յաղթութիւն է տանում, և նորից իշխում է հին հեթանոսական աշխարհայեցողութիւնը: Ուստի երևան է գալիս աշխարհիկ բանահիւսութիւնն իր ազդեցութեամբ, բայց քրիստոնէական աշխարհայեացքի բովով անցած լինելուն համար, աւելի ազնուացած և մաքրուած: Դժբախտաբար՝ այդ դարերի գրականութիւնը իր լեզուով և բնաւորութեամբ չի շարունակում մինչև մեր օրերը: Երկրի աւերմունքի պատճառով սկսում է մի Երրորդ շրջան, 17—19 դար, երբ առաջ է գալիս մեր հին կեանքի ու գրականութեան վերածնութիւնը և հնի նմանողութեամբ գրականութիւն: Այդ շարժումն ինչքան էլ կարևոր էր, բայց իրապէս մի յետադիմութիւն էր:

4.

Առաջին շրջանի (մինչև 11-րդ դար) բանաստեղծութիւնը, Պարոններ, ամբողջապէս կրօնական է, հեղինակները եկեղեցական են: Եւ եթէ կան մի երկու ոչ կրօնական երկեր (կամ ոչ եկեղեցական անձեր), դրանք էլ տոգորուած

ին կրօնական ոգով և գրուած են նոյն ձևերով, ինչ որ եկեղեցականները:

Մեր գրականութիւնից առաջ արդէն՝ ընդհանուր եկեղեցին ունէր իր բանաստեղծութիւնը. ուստի մեր եկեղեցական բանաստեղծութիւնն սկսւում և զարգանում է հետեղութեամբ գլխաւորապէս յունական եկեղեցական բանաստեղծութեան: Դա ամենից առաջ օրհներգութիւնն է, որ ծնւած է քրիստոնէական աստուածաշտութեանը հանդիսաւորութիւն տալու համար՝ նմանողութեամբ հրէից սաղմոսներին և մարգարէական օրհներգութիւններին, որ ակըզբից ի վեր ընդունուած են եղել եկեղեցում երգել: Եւ այս երկուսի, հրէական քնարերգութեան և յունական օրհներգութեան ազդեցութիւններով, շատ քիչ ազդուելով մէջ հին հաւատալիքներից ու գաղափարներից, կտրուած հայ կեանքից և մեր աշխարհից, շարունակում է զարգանալ մեր հոգևոր երգը և մինչև 8-րդ դարն առանձնապէս ծաղկում է: Այդ ժամանակներում հետեւելով դարձեալ յունաց՝ ընդունում է կանոնը, և մեր հոգևոր երգը վերածւում է շարականների, այսինքն առանձին տօների համար մի շարք առանձին երգեր են կազմւում, և աղատ ապրում է մինչև 13-րդ դարը: 11—13-րդ դարերում նորից մի երկրորդ ծաղկման շրջան է ունենում մեր հոգևոր երգը, մինչև որ 13-րդ դարի վերջերում դադարում է զարգանալուց, և այլևս նոր շարականներ գրեթէ չեն յօրինւում: Մի դար ու կէս առաջ վերջանում է նաև յունական օրհներգութեան զարգացումը, փակուելուց առաջ նոյնպէս մի երկրորդ ծաղկման շրջան ապրելով: Որ օրհներգութիւնը դադարում է, դրա պատճառն այն է, որ ժամակարգութիւնը, թէ մեր և թէ յոյների մէջ, փակւում է, և նոր երգերն այլևս չեն ընդունում ժամերգութեան մէջ: Ուստի եկեղեցական բանաստեղծութիւնը, ինչ որ շարականների տեսակին է վերաբերում, կորցնում է իր գործնական նշանակութիւնը և բնականաբար մեռնում է:

Հոգևոր երգը ստեղծուած լինելով եկեղեցու պէտքի համար՝ ամենից առաջ եղել է, և այս ոչ միայն մեր մէջ, այլ և յունաց և ուրիշների, մի յարմար միջոց ժողովրդի

մէջ բարեպաշտութիւն զօրացնելու և քրիստոնէական ուսումը տարածելու, նոյն իսկ ինչ որ դաւանաբանութիւնների և մեկնաբանութիւնների մէջ զարգանում էր: Դա մի կողմից ուրեմն օրհներգութիւնն է, միւս կողմից զիտակալական, ուսուցական բանաստեղծութիւն: Ուստի թէպէտ մեր շարականների մէջ կան այնպիսիները, որոնք ունին անկեղծ և ինքնաբերական զգացմունքի ջերմութիւն և խորութիւն և գաղափարների վսեմութիւն, արտայայտուած մեծ ուժով, բայց և այնպէս նրանց մէջ ընդհանրապէս չպիտի որոնհլ քնարերգութեան բարձր թոնջներ և փայլուն ու բազմազան արտայայտութիւններ: Միակերպութիւնը և անվերջ կրկնութիւնը դրանց ամենախոշոր թերութիւնն է: Դարեր շարունակ ամենայն օր և օրը մի քանի ժամ երգուելով՝ այդ երգերը, որոնք նոյն գաղափարների ու զգացումների յեղյեղումն են,—միացած եկեղեցական գրականութեան միւս տեսակների հետ,—վերջ ի վերջոյ հասնում են իրենց նպատակին: Դրանք ոչ միայն քրիստոնէութիւնը պաշտպանում են Զրադաշտի ու Մահմեդի կրօնների դէմ, ոչ միայն Ս. Դրքի, յատկապէս Աւետարանի պատմութիւնները ժողովրդականացնում են և նոյն իսկ դաւանաբանութիւն սովորեցնում, այլ և, որ գլխաւորն է, հոգևոր եռանդը մեծացնում են մերթ ուրախ երգերով, սքանչական ու ցնծալից փառաբանութիւններով, և յաճախ տխուր ողբերով, լալահառաչ պաղատանքներով, որոնց բանաստեղծները ճնշւում, նեղւում են մեղքի ծանրութեան տակ, կորցնում են իրենց ներքին խաղաղութիւնը և զարհուրելով դողում են ու շարունակ արտասւում:

Ալիք յանցանաց զիս ալեկոծեն,
Եւ մեղք իմ բազում զիս յանդիմանեն.
Արդ զի՞նչ արարից մեղուցեալ անձամբս,
Որ չեմ ապրելոց յահագին հրոյն:

5.

Ինչքան էլ հոգևոր երգերի մէջ այսպիսի ապաշխարութիւնը մեծ տեղ է բռնում, բայց և այնպէս դրանք մեծ մասամբ յօրինուած են այն շրջանում, երբ Եկեղեցին իր

ձեռքի տակ եղած միջոցներով դեռ ձգտում էր ամբողջ քրիստոնէութիւնը մի աշխարհաւարաց դրութեան մէջ դնելու: Դրան հասնում են 10-րդ դարում, երբ արդէն իշխում էր ամեն տեղ քրիստոնէական աշխարհայեցողութիւնը Աստուծու և Սատանայի, մեղքի և քաւութեան, այս աշխարհի և այն աշխարհի մասին. երբ թագաւորում էր աշխարհի և կեանքի ունայնութեան զաղափարը. իսկական աշխարհն ու հայրենիքն այն աշխարհն էին համարում մահից յետոյ: Իսկ դրան հասնել կարելի էր մեռնելով, ուրեմն և պէտք էր մեռցնել մարմինը՝ տանջանքների ենթարկելով իրեն. և մարդ որքան աւելի ապաշխարէր, տանջէր իրեն քաղցով ու ծարաւով և այլ միջոցներով, այնքան աւելի լաւ՝ հոգու համար:

Հոգու այս կռիւը մարմնի դէմ և մարմնի ոչնչացումն իր գործնական արտայայտութիւնն է գտնում վանական և ճգնաւորական կեանքի միջոցով, որ 10-րդ դարում խիստ զարգանում է հայոց մէջ: Այդ պատճառով և մեր կրօնական բանաստեղծութիւնը, հետեւելով կեանքին, եւրոպականից վաղ, իր մէջ արձանագցնում է հենց այդ ճգնաւորական միաստիկ աշխարհայեցողութիւնը և առաջ է գալիս ճգնաւորական ողբերգութիւնը, մի քնարական տխուր բանաստեղծութիւն, որի մէջ ապաշխարողը պատկերանում է իր հոգեկան ձգտումներով և սարսուռներով: Եւ այն ժամանակ, երբ թւում էր թէ ոչ մի իսկական մաքուր քնարերգութիւն չպիտի լինէր, որովհետեւ եկեղեցին արդէն հոգացել էր ամեն բանի համար. երբ ամեն մետաքիզիկական խնդիր արդէն առաջուց որոշուած էր, և բանադրանքի սպառնալիքով՝ ոչ ոքի թոյլ չէր տրւում եկեղեցուց դուրս և եկեղեցուց տարբեր մտածել և զգալ, ուրեմն և փակուած էր անձնականութիւնը, քնարերգութեան բուն աղբիւրը, — այդ ժամանակահանձնում է Գրիգոր Նարեկացին իր հանճարով, և մեր կրօնական քնարերգութիւնը դառնում է արտայայտութիւն անհատական երազանքների, կրօնական զօրեղ անհանգստութիւնների, այս աշխարհի և այն աշխարհի, Աստուծու և մահուան ու յաւիտենականութեան խնդիրների: Եւ այս ի-

նում է մի այնպիսի արուեստով և ուժով, որ մի անգամից կերպարանափոխուած է մեր կրօնական բանաստեղծութիւնը: Եւ այսպէս փոխուած է ոչ միայն տխուր երգը, այլ և ուրախ երգը. ապաշխարութեան շարականները զարգանալով դառնում են ամբողջ ողբերգութիւններ, իսկ ուրախ շարականները դառնում են տաղեր, որ առանձին տեսակի տօնական երգեր են, յօրինուած՝ տօնակատարութիւնների և առանձին հանդիսաւորութիւն տալու համար: Գրիգոր Նարեկացու տաղերն ու Ողբերգութիւնն այլ ևս նմանողութիւն չեն, հեռու կեանքից ու բնութիւնից, մի քանի ընդհանուր սովորական ձևերով յօրինուած, ինչպէս շարականներն են. այլ դրանք անհատի իրեն ապրածի, անձի խոր զգացածի պատկերն են: Ողբերգութեան մէջ երևում է ինքը հսկող Նարեկացին իր ապաշխարութեամբ, իր ձգտումով ոչնչացնել մարմինը, միանալ Աստուծու հետ, ինքն իրեն քարկոծելով ու տանջելով: Բայց նա մենակ չէր. նրա նման հազարաւորներ ու բիւրաւորներ կային այն ժամանակ, և մեր բանաստեղծութիւնը դառնում է այդ ընդհանրութեան արտայայտութիւնը: Առաջին անգամ անկեղծ ներշնչումը մի գիտակցական պահանջ է դառնում բանաստեղծութեան համար. մարդկային հոգին և բնութիւնը մտնում են քնարերգութեան մէջ, բնութեան հետ նաև կանացի գեղեցկութեան և իրական կեանքի նկարագիրը, թէպէտ Աստուածածնի համար, թէպէտ և այլաբանութեամբ: Այդ արդէն ազդանիշ էր, որ աշխարհայեցողութիւնը, հետեւաբար և բանաստեղծութիւնը փոխուելու էր:

6.

Եւ իսկապէս, Պարոններ, ճգնաւորական կեանքը Նարեկացու օրով և ճգնաւորական ողբերգութիւնը նրա ձեռով հասնում են կատարելութեան և նոյն իսկ ծայրայեղութեան, ուստի և ճգնաւորական սկզբունքը, իր ծայրայեղութեան մէջ, բերում է իր ժխտումը: Եւ մինչդեռ քրիստոնեայ աշխարհի ուրիշ կողմերում դեռ ընդհանրապէս իշխում էր թանձր միջնադարը, 11-րդ դարի սկզբից արդէն մեր կեանքի և մտածութեան մէջ մտնում է մի յեղաշրջում, որով

կրօնական-ճգնաւորական ոգին սկսում է տակաւ առ տակաւ տեղի տալ աշխարհական ոգու առաջ:

Հարիւրամեայ խաղաղութեան շրջանում, 10-րդ դարու երկրորդ քառորդից սկսած, ժողովուրդն աճում էր. մեծ քաղաքներն ու շահաստանները, ինչպէս Անի, Արծն և ուրիշները, բարձրացել էին. հին աղնուականութեան և եկեղեցականութեան կողքին դիրք էին ձեռք բերում և հարուստ քաղաքացիները: 10-րդ դարու խոտակեցութիւնն ընկնում էր. կեանքն ու աշխարհը ստանում էին արժէք. մարդիկ հարստացած սկսում էին ճոխ ապրել, զարդարուած ու շրջապատուած ճարտարուեստի պաճուճաններով և գեղարուեստով: Աշխարհիկ շքեղութիւնը մտնում էր նոյն իսկ եպիսկոպոսների բնակարաններն ու կաթողիկոսարանը, որ ոչնչով յետ չէր մնում թագաւորական պալատներից: Արծաթը յարգի էր դարձել, և անարատ բարեպաշտութիւնը պակասում էր:

Դրա հետ միասին 10-րդ դարուց արդէն սկսում է տարածուել մի կրօնական շարժում, թո՛ղ դրակեցոց աղանդը (որի սկիզբը դնում են 9-րդ դարում), որ մերժում էր եկեղեցու նուիրապետութիւնը, բոլոր խորհուրդները, հանդերձեալ կեանքը, անմահութիւնը: Այդ աղանդաւորների համար մեղքը նոյնպէս գոյութիւն չուներ, ուստի և մեղքի պատիժ էլ չկար: Ծգնաւորական ուսման, և մինչև իսկ եկեղեցուն, բոլորովին հակառակ մի վարդապետութիւն ուրեմն, որ ծաւալւում էր նոյն իսկ այն ժամանակ, երբ ծաղկում էր ճգնաւորութիւնը, որի և ժխտումն էր այդ, և տարածւում էր նոյն իսկ հոգեւորականների և եպիսկոպոսների մէջ: Դա ծայրայեղութեան հասած մի բողոք էր ճշգնաւորական կեանքի, եկեղեցու կարգերի ու զաղափարների դէմ, նման Պրովանսում ծաւալուած Ալբիգոյեան աղանդի, որ արեւելքից 11-րդ դարի կէսերին անցնում է հարաւային Ֆրանսիա և 12-րդ դարում ու 13-րդի սկիզբներում ծաւալւում է, առաջ բերելով մի զօրեղ կրօնական շարժում: Մեզնում ուրեմն այդ շարժումը մի դար առաջ է ընկնում:

Այս ազատախոհութեան հետ միասին՝ նոյն 11-րդ դարի վերջում զգալի է լինում մի նոր արուեստի պահանջ:

Ժամանակի ամենանշանաւոր վարդապետը, Յովհաննէս Սարկաւազը († 1129 թ.), որ մեծ գիտնական է, փիլիսոփայ մատենագիր, միաժամանակ և բանաստեղծ, — արուեստի մի նոր տեսութիւն է առաջ բերում. այն է՝ արուեստը, ուրեմն և բանաստեղծութիւնը, նմանողութիւն է բնութեան, և թէ բնական ամենից բարձրն է ու մաքուրը, ուստի և բանաստեղծը պիտի աշխատի նմանուել բնութեանը: Այսպէս կեանքի և բանաստեղծութեան մէջ բնութիւնը մեծ արժէք է ստանում:

Այս հայեացքի առաջին հետեանքն այն է լինում, որ բանաստեղծները և առհասարակ մատենագիրները թողնում են ոտանաւորի խճճուած ձևերն և խրթնաբան ճոռոմ լեզուն, որ նոյն իսկ բանաստեղծութեան մէջ էր մտել, և որ նոյն իսկ բանաստեղծութիւնն սկսում են իշխել: Այս թիւնն ու բնական մտածողութիւնն սկսում են իշխել: Այս ձգտումը տանում է նաև դէպի կենդանի խօսակցական լեզուն, որ արդէն բաւական հեռու էր զբաղանութեան մէջ ընդունուած լեզուից և գրականութեան մէջ երևան է գալիս 12-րդ դարից արդէն:

Այս մտաւոր շարժումը և փոփոխուած ոգին պիտի առաջ բերէին մի նոր բանաստեղծութիւն աշխարհիկ ոգով, սիրոյ և զուարթ վայելքների մի բանաստեղծութիւն, ինչպէս Պրովանսում, եթէ միայն հայ կեանքը շարունակէր ընթանալ իր բնական շաւղով: Պրովանսն այդ կողմից բախում էր լինում, որովհետև այնտեղ բանաստեղծութիւնը ժամանակ է ունենում ազատ ծաղկելու գոնէ մինչև 13-րդ ժամանակ և ունենում ազատ ծաղկելու գոնէ մինչև 14 և 15-րդ դարերում: Մենք մինչև անգամ այդ կարճատև բախտն էլ չենք ունենում. մեր բանաստեղծութիւնը արդար փոխւում է, բայց ոչ անմիջապէս ուրախ եղանակի դարձնելով: Որովհետև Գր. Նարեկացու Ողբերգութեան հրատարակութիւնից դեռ մի քսան տարի չանցած՝ Սելջուկեան թուրքերն սկսում են հրոսել Հայաստանը:

տան: Յոյնների ձեռքով ետևէ ետև քայքայւում և ընկնում են հայ թագաւորութիւնները, և այնուհետև մի կողմից յոյները, միւս կողմից թուրքերի վայրենի հրոսակները քանդում, հրդեհում են ամեն ինչ. ոչնչանում են հայ իշխանութիւնները, հարուստ քաղաքները. ազնուականութիւնը երկրից դուրս է հալածւում: Քանդւում է շէն ու մշակուած աշխարհը, առանձնապէս երկրի կենդրոնը, ուր ծաղկում էր ուսումնաբերութիւնը, և մեր գրականութիւնն ապաստան է գտնում կամ հիւսիսային Հայաստանի անտառապատ լեռներում, կամ հեռու Սեւա լեռների առապատներում: Այն օրից մինչև այսօր, գրում է Լաստիվերտցին մի 40 տարւայ համար, «Ոչ մի օր կամ միոյ ժամանակի հասցիպիցեալ անդորրութեան կամ դիւրութեան»: Իսկ մենք կ'սորող ենք ասել, այն օրից մինչև այսօր սկսւում է մեր բախտի եղեւորութիւնը, մեր կոիւր թուրքերի դէմ, և մենք, արդի աղէտների ժամանակակիցներս, կարող ենք հասկանալ, թէ ինչ է եղել հայ ժողովրդի վիճակը 11-րդ դարում, երբ այդ մարդագէտները Հայաստանում շարժւում էին ինչպէս թշնամու դեռ չնուաճած երկրում. նրանց աղեղների լարերը մարդկանց կաշիներից էին, որ շերտ շերտ հանում էին կենդանի մարդկանց մէջքերից: Կարող էր այս պիսի դրութեան մէջ ուրախութիւն մնալ, և ուրախ և ազատ բանաստեղծութիւն զարգանալ:

Ժամանակի աղետալից վիճակը ստիպում է մարդկանց նորից յետ դառնալ և կրօնի մէջ գտնել մխիթարութիւն և իրենց դժբախտ կեանքի բացատրութիւն, ու ելքը որոնել: Առաջին հարցը, որ տալիս են մտածողները, է ինչո՞ւ են գալիս մեր գլխին այս աղէտները. հայերը որ այնքա՞ր բարեպաշտ էին, այնքան եկեղեցիներ և վանքեր էին շինել Աստուծոյ փառքի համար, ինչո՞ւ են տառապում թուրքերի ձեռքին: — Պատասխանը գտնելը դժուար չէր. հին քրիստոնեայ մատենագիրներն արդէն պատրաստել էին այն գաղափարը — որ եղել է բոլոր ազգերի մէջ, և քրիստոնեաների մէջ չին տ'սկսբանի ազգեցութեամբ աւելի զօրացած, — թէ մարդի՛ մեղք են գործում և Աստուած պատժում է նրանց՝ մեղքի համար: Պէտք է ուրեմն ապաշխարել, որ Աստուած պատիժը

վերացնի: Մինչև հիմա ճգնաւորներն ունեանց արտայայտիչ բանաստեղծները ողբում էին անհատական մեղքը, հիմա մեղաւոր է ազգն իր ամբողջութեամբ, նա պէտք է ապաշխարի: Բայց նմանութիւնը միայն այսքան է: Անհատն ապաշխարում էր իր մարմինը տանջելով իր հոգու փրկութեան համար, որ հանդերձեալ կեանքում է լինելու. իսկ այստեղ ապաշխարութիւնը լինում է ազգի փրկութեան համար, որ այս աշխարհում պիտի լինի, այն էլ ոչ թէ մարմինը մեղցնելով, այլ բարքերի մաքրութեամբ և առաքինի կեանքով: Կը նշանակէ՝ աշխարհն արդէն ստացել է արժէք, և նոյն իսկ ամենակրօնասէր մարդը, ինչպէս Արիստակէս Լաստիվերտցին, սիրում է աշխարհն ու նրա մշակած դաշտերը, ժողովրդի բարեկից կեանքը, ուրախ ու զուարթ աշխատանքը, կատարած ուրախութիւնները, երգերն ու պարերը, թագաւորն իր փառաւորութեամբ, զօրքերն ու կոիւնները, որոնք կային մի ժամանակ և չկան այլ ևս. ուստի և «այժմ յողբս փոխեցաւ մեզ ամենայն»:

Եւ ահա Հայոց թագաւորութեան անկումից յետոյ Մեծ Հայաստանում, Սելջուկեան թուրքերի տիրապետութիւնը դեռ չհաստատուած, սկսւում է հայոց քաղաքական իշխանութիւնը վերականգնելու երազը և դրան նուիրուած բանաստեղծութիւնը — հայրենասիրական ողբերգութիւնը, իր երկու պատկերով՝ փառաւոր ու զուարթ անցեալի և անշուք ու տխուր ներկայի, որ տևում է մինչև օրս. որովհետև մինչև օրս էլ նոյն վիճակը մնում է յարատեւ: Մեր բանաստեղծութեան ձեռք մնում է նոյն ողբը, բայց բովանդակութիւնն և ոգին փոխւում են: Համազգային հայրենասիրութեան գաղափարն ու զգացումը՝ ծնունդով ժողովրդի դառնաղէտ վիճակից՝ հետզհետէ, իշխանական-տների անկման և ազնուականութեան ոչնչացման հետ, ընդհանրանում է, ազգային միութեան ազգակներից մէկը դառնում, անբաժան մնալով թշուառ ժողովրդի վիճակի արգահատութիւնից, — ահա թէ ինչ է կազմում այս նոր ողբերգութեան էութիւնը:

Կրօնական ձևի տակ, բայց իսկապէս մեր աշխարհական կեանքի առաջին ողբերգուն է սգաւոր Ար. Լաստիվերտ:

ցին, որ յաճախ բանաստեղծութիւն է յօրինում արձակ լեզուով, և խիստ սրտառու է կերպով լալիս է իր հայրենիքի կործանուած փառքը, քաղաքական և կուլտուրական կեանքի անկումը, և երգում է շատ պարզ և անարուեստ, բայց այնպէս խորը և անկեղծ և յուզիչ, որ դարեր շարունակ, նոյն իսկ 19-րդ դարում, նմանողութեան աղբիւր է դարձել: Նրանից յետոյ նոյնը շատ ուժեղ երգել են Ն. Շնորհալին և ուրիշները: Ես ի հարկէ մեր բանաստեղծութեան այս տեսակի պատմութիւնը պիտի չանեմ. բաւականանամ ասելով, որ Յովհաննէս Սարկաւազի Ս. Ղևոնդեանց շարականի տողերն են՝ «Հեղձամբ արեան սրբոց քոց հօտապետաց՝ զեկեղեցւոյ քոյ ցրուեալ մանկունս ժողովեան յուրախութիւն, զվայրատեալս տրտմութեամբ և արտասուաց յորդահոս քղմամբ. փրկութեան մերոյ պարզեաց Բաշխող», — ցրուած և և արտասուահոս տրտմութեամբ վայրատուած հայ ժողովըրդին ուրախութեամբ ժողովելու և փրկելու մի իղձ և աղօթք, որ 11-րդ դարուց ի վեր քանի քանի անգամ ասուել է և աւելի լաւ ձեւերով երգուել, կարծես, այսօրուայ օրի համար:

7.

Եթէ սպասուած աշխարհիկ կենսութեան բանաստեղծութեան տեղ՝ 11-րդ դարում տխուր և լալաղին հայրենասիրական ողբերգութիւնն է ծագում, պատճառն ուրեմն այն է, որ Գր. Նարեկացուց ի վեր բանաստեղծութիւնը կեանքին էր հետևում: Դրանով մեր բանաստեղծութիւնը, կրօնական զգացումից յետոյ, գտել էր իր քնարականութեան կարևոր և մեծ թեմաներից մէկը, որ այլևս կրօնական չէ: Եւ այսպիսի զարգացումն էլ բնական էր. խիստ կրօնականից մի անգամից թուիչը չէր կարելի անել զէպի մաքուր աշխարհականը, քանի որ բանաստեղծները զեռ եկեղեցական էին: Պատշաճի և անպատշաճի խնդիրը, միակողմանի հայեացքը կհանքի վրայ՝ եկեղեցականին բնականօրէն դրնում էին գաղափարների և զգացումների նեղ շրջանակի մէջ և զեռ երկար ժամանակ չէին թողնում նրան գրականութեան մէջ ազատ շարժուել: Դրա հետ միասին նրան

կաշկանդում էր զեռ Ս. Գրքի նուիրական դարձած լեզուն, որ հնացած էր արդէն, բայց զեռ պարտաւոր էին գործածել:

Հայրենասիրական ողբից յետոյ առաջին տեսակը որ մըշակում են, է՝ առակը, բարոյախօսութիւնն ու խրատը, որ ոչ միայն անպատշաճ չէր, այլև շատ համապատասխան էր հոգևորականի կոչմանն իբրև ուսուցչի և խրատողի: Հին մեկնաբանութիւնն արդէն հիմնուած էր այլաբանութեան վրայ, և շատ բնականօրէն հոգևորականները մեկնաբանութիւնից անցնում են առակի տեսակին և սիրում այն:

Ներսէս Շնորհալին արդէն ունի «առակք», որ է հանելուկներ, ժամանակի խօսակցական լեզուով. բայց իսկական առակների ժողովողն ու խմբագրողն է Մխիթար Գոշը († 1213 թ.): Այնուհետև առակների ժողովածու կազմում է Վարդան Այգեկցին, սր ապրել է 12 և 13-րդ դարերի մէջ, և առաջ մինչև 17-րդ դարը զարգանում են «Վարդանայ առակների» ժողովածուները: Բայց սրանց մէջ շատ բան իսկական առակներ չեն, այլ հոգեշահ կամ դուարձալի պատմուածքներ, միայն առակի ձև ստացած: Ծիշտ նոյն միջոցին, 12-13-րդ դարերում, Քրանտիական գրականութեան մէջ ևս, առաջ է գալիս «Աղուէսի ոտման» ասածը, որ առակների մի ժողովածու է, ինչպէս և fabliaux կոչուած առակների ժողովածուները: Դա քաղբների, այսինքն՝ քաղաքացիների գրականութիւնն էր:

Առակների հետ միաժամանակ, և նրանցից էլ զեռ վաղ, առաջ է գալիս մեղնում խրատական և իմաստական բանաստեղծութիւնը, որ աւելի զարգանում է 12-14-րդ դարերի մէջ, փոքրիկ իմաստալից քերթուածներ, լուրջ բնաւորութեամբ, երբեմն միացած պարսաւի կամ խորհրդածութեան հետ: Դրանք խրատական բանաստեղծութիւն լինելով հանդերձ՝ երբեմն իսկական քնարերգութիւններ են. որովհետև գրուած են անձնական տրամադրութեամբ, ջղոտ և խորն զգացած:

Առաջին անգամ այս բանաստեղծութիւնների և աւելի առակների մէջ գտնում ենք բուն ժողովրդական ողին, հասարակ դասի իրական կեանքը՝ փոխուած աշխարհայեացքով, յաճախ կենդանի խօսակցական լեզուով: Զկայ այլևս հին

եկեղեցասիրութիւնը: Հին ճգնաւորական խտութիւնն արդէն ծաղրի առարկայ է. հաւատքի վէճը այլևս չի հետաքրքրում նոյնիսկ հոգեւորականներին, — մի կեանք որ զուարթ, ծիծաղող ու ծաղրող է, զուարճացող, սառն դէպի կրօնն ու եկեղեցին: Միւս կողմից՝ հանդէս է գալիս ժողովրդի զանազան դասերի յարաբերութիւնը, քննադատական ոգի, դժգոհութիւն եղած դրութիւնից, սոցիալական խնդիրներ, աշխատաւոր դասի բողոքն ու ատելութիւնն ընդդէմ հարուստ ու վայելող եկեղեցականի և դատարկապորտ ու անպէտք և նոյնիսկ քնասակար ազնուականի: Եւ վերջապէս, ընկերական անհաւասարութիւնների և հայոց ազգի կրած տառապանքների պատճառով, երևում է մինչև անգամ երկբայութեան ոգին, խիստ բողոքի ձևով ընդդէմ Աստուծու կամ, հեթանոսաբար, ձախտագրի վճռի: Մարդիկ ոչ միայն, ինչպէս առաջ էր. կասկածում են Աստուծու դատաստանի արդարութեան մասին, այլ և բանաստեղծութեան նիւթ են դարձնում այն:

Ահա մի նոր աշխարհայեցողութիւն 12-14-դարերում, կրօնական կաշկանդումից ազատութիւն, որ չէր կարող իւր խորին ազդեցութիւնը չունենալ մեր բանաստեղծութեան վրայ և որ մենք զօրեղ կերպով արտայայտուած ենք գտնում երեք միմեանց ժամանակակից բանաստեղծների երկերի մէջ. Ֆրիկի, որին նոյնացնում են Խաչատուր Կեչառացու հետ (մեռած մօտ. 1330 թ.), Յովհաննէս Երզնկացու, որ կոչւում է նաև Պուղ կամ Ծործորեցի (մօտ 1250 — 1326) և Կոստանդին Երզնկացու (1336 թ. յիշւում է իրրև ծերունի): Մենք տեսնում ենք, որ անհատն ընդհանրութիւնից անջատուելով ստանում է իր արժէքը և ցուցադրում է իրեն, հոգալով իր յիշատակի համար. ծնւում է անձնական բանաստեղծութիւնը, որի համար նիւթ են դառնում բանաստեղծի իրեն զգացումները, սէրն ու ատելութիւնը, բախտն ու դժբախտութիւնը: Մարմինն արւում է իր իրաւունքը, դրա հետ և սկսւում է բնութեան և սիրոյ երգը, եկեղեցականի դրած, վարդ ու սոխակի պատկերով կամ առանց դրան. բայց բնութիւնն այլևս այլաբանութեան համար չէ, այլ ինքն իր համար: Եւ վերջա-

պէս հեծեծալով բարձրանում է աշխարհի ունայնութեան և մահուան ցաւագար երգը, բոլորովին տարբեր Գր. Նարեկացու մահուան երգից, իբրև միութարութիւն սոցիալական կամ ազգային անարդար և անհաւասար դրութեան, կամ իբրև վախճան անհատական տանջալից ունայն կեանքի, — մի երգ որ չունի ժամանակակից Պրովանսի գրականութիւնը և որ Ֆրանսիական գրականութեան մէջ երևան է գալիս 15-րդ դարի երկրորդ կէսին միայն:

Այսպէս ահա, Տիկիրներ և Պարոններ, 11-րդ դարից մինչև 14-րդ դարի սկիզբները, չնայելով քաղաքական անբարեյաջող վիճակին, մի տեսակ ինքնուրոյն վերածնութեամբ աշխարհիկ միտքը թափանցում է եկեղեցականի բանաստեղծութեան մէջ, և մեր քնարերգութիւնը Նարեկացու Ողբերգութիւնից յետոյ՝ դարգանում է ձեռք բերած լինելով գրեթէ բոլոր կարևոր թեմաները՝ կրօնական միատիկական զգացումն ու մտածութիւնը, հայրենասիրութիւն, բնութիւն ու սէր, աշխարհի ունայնութիւն և մահ, անձնական հանգամանքներ, և նոյն իսկ բողոք սոցիալական անհաւասարութեան դէմ, երգիծանք վատ կարգերի: Մի կատարեալ յեղաշրջում, որ ընկնում է Պրովանսի նոյնալիսի բանաստեղծութեան հետ միաժամանակ:

Սկզբնաւորութեամբ բոլորովին անկախ Պրովանսից, — որովհետև մեր բանաստեղծութիւնն իր նախապատրաստութիւնն ունենում է 11-րդ դարում, երբ Ֆրանկների հետ ոչ մի յարաբերութիւն չունէին հայերը, — յաջորդ 12 և 13-րդ դարերում, սակայն, մեր գրականութիւնը կարող էր խաչակրութեան միջոցով ազդուել Պրովանսի գրականութիւնից: Այդ ժամանակ, 12-րդ դարի վերջում և 13-րդի սկզբում, նոյն գրականութեան ազդեցութեամբ, այն էլ Արևելքում ունեցած շփումով, նոր դեռ մտաւոր շարժում էր սկսւում առաջ գալ Հիւսիսային Ֆրանսիայում և Իտալիայում: Բայց մեր բանաստեղծութեան ընթացքը տարբեր է լինում: 14 և 15-րդ դարերում Պրովանսի բանաստեղծութիւնն ընկնում է. այնտեղ, ինչպէս և Հիւսիսային Ֆրանսիայում, բանաստեղծները պարապում են արուեստակեալ շինծու ձևերով. միշտ միևնոյն ընդհանուր գաղա-

փարսներով, կնոջ պաշտամունքի ու գեղեցկութեան մի գովքով միայն, այն էլ քարացած, աւանդական դարձած ու դժուար հասկանալի խրթին արտայայտութիւններով և ոտանաւորի բարդ, խճճուած տեսակներով: Չկայ զգացում, չկայ բնութեան սէր. լոկ դատողութեան մի բանաստեղծութիւն, յօրինուած մատուր վարժութեամբ. 14-րդ դարի առաջին քառորդից նոյն իսկ կանոն է դրուում, թէ սէրը չպէտք է սովորական ձևով երգել, այլ միայն այլաբանութեամբ, և թէ կանանցից միայն Ս. Կոյսին և միւս սրբուհիներին կարելի է երգել: «Նրանց գոված տիկինը միայն տիկնոջ գաղափարն է, նրանց տարփանքը՝ միայն տարփանքի գաղափարը. ամեն ինչ նրանց գլխով անցնում է իբրև վերացական շինուածք և ոչ նրանց սրտով իբրև կենդանի յոյզ», — ասա թէ ինչպէս է բնորոշւում Պրովանսի և Ֆրանսիական բանաստեղծութիւնը 14 և 15-րդ դարերում: Մեր բանաստեղծութիւնը բոլորովին հակառակ ընթացքն է ունենում:

Մեր սիրոյ երգը սկսուած էր այլաբանութեամբ 10-րդ դարում արդէն Աստուածածնի գովքով, ապա վարդ ու սոխակի պատկերով. բայց 13-րդ դարի վերջում և 14-րդի սկզբում ազատուում է այլաբանութիւնից և եթէ յետագայում ևս վարդ ու սոխակի պատկերով կամ այլաբանութեամբ գրում են, այդ ոչ թէ նրա համար, որ թոյլատրուած չէր բացայայտ երգել, այլ որ այլաբանական ձևը զիւր էր գալիս կրօնաւորներին: Միւս կողմից բանաստեղծութիւնը 12-րդ դարից սկսած ձգտում է ազատուել կաշկանդումներից, խրթնաբանութիւններից ու «ծածուկ ճառերից», և Դանտեից մի դար առաջ արդէն մեղնում կարիք է զգացւում նոյն իսկ կենդանի խօսակցական լեզուով գրելու: Բայց որ գլխաւորն է՝ ինչքան էլ շատ միակերպութիւն կայ մեր սիրոյ երգի մէջ ևս, բայց և այնպէս 14—17-րդ դարերում մեր այդ երգը ոչ միայն չի ընկնում, այլ ընդհակառակն աւելի զարգանում է Թլկուրանցու, Աղթամարցու և ուրիշների ձեռքով. բանաստեղծները երգում են մեծ մասամբ իրենց անձնական սէրը, առանձնայատուկ ձևերով, իրենց սեպհական խառնուածքի համեմատ. Յովհաննէս Թլկուրանցու մի սիրոյ երգ զօրեղ կերպով տարբերւում է Կոստանդին

Երզնկացու, Գրիգոր Աղթամարցու կամ Գուչակի երգից, և սրանց երգերը՝ մէկմէկուց:

Ես այստեղ չպիտի մեր սիրոյ երգի պատմութիւնն անեմ. այդ գլխաւոր երգիչների բանաստեղծութիւնները բնորոշելու համար՝ միայն պիտի դիտեմ, որ կրօնական միատիկայից յետոյ՝ բնական էր, որ առաջին սիրոյ երգիչ Կոստանդին Երզնկացու երգը ազնիւ ու մաքուր լինէր, աւելի մի միատիկական հոգևոր սէր, քան Ֆիդիկական տարփանք: Սէրը նրա բանաստեղծութեան մէջ դարձած է մի տիեզերական աստուածային ոյժ, յաւերժ կենդանութեան աղբիւրը, որ լոյսի հետ ներգործում է բնութեան բոլոր երևոյթներին մէջ: Հետզհետէ սակայն այդ սէրը, 14—17-րդ դարերում մարմին է առնում, կապւում կենսասիրութեան հետ. Թլկուրանցու սիրոյ երգի մէջ արդէն թանձրացած երկրաւոր տարփանքն է իշխում, կրքի կենդորոն ունենալով կանացի գեղեցիկ մարմինը, որի տեսքից ամեն անգամ ամբողջ մարմնով դողում է բանաստեղծը, սիրտը մարում, ուշագրնաց լինում:

Յանկարծակի մէկ մի տեսայ
Որ կու ցօղայր գունն երեսէն.
Թալցայ անկայ ի տեսլեանէն,
Շողայր կաթէր լոյսն ի զղէն:
Աչքերն է ծով, ունքն է թուխ ամպ,
Մազն է դեղձան ոսկի թելէն.
Ձինքն ճոհար՝ գէտ գուռի ճեղ,
Հրով այրէր զերկիր ամէն.
Ճոխագնաց, մանրաքայլող,
Հոգիքըն ի մարմնէ քակող,
Լուֆթն է ծածկեր զամեն աշխարհա,
Շաքար կաթէր իւր քարամէն:
Երբ իմ աչերս ի քեզ դիպաւ,
Նա վառեցայ գէտ մոմեղէն,
Խեղաբնաց ի վայր մնացի,
Ջարհուրեցայ ի տեսլեանէն...

Յովհ. Թլկուրանցի

Գարունն է բացուել վարդն ի բաղչանին.

Քաղցր եղանակեն բլբուլն ու զուժրին.

Սիրով են վառեալ ի կարմիր թփին,

Կանաչ ու կարմիր տերև կու հագնին:

Գինով եմ գինով, հարբեր եմ սիրով.

Գինով եմ գինով ցերեկս արևով.

Գինով եմ գինով գիշերս երազով:

Գր. Աղթամարցի

Սա արդէն հեթանոսաբար մտածուած սէրն է, իբրև մի կիրք, որ Աստղիկ գիցուէին գարնանը բորբոքում է մարդկանց սրտերի մէջ: Այստեղ արդէն մեր բանաստեղծութիւնը հասնում է իր սկզբնական աղբիւրին: Գրիգոր Աղթամարցու սիրոյ երգը, սակայն, Կոստանդին Երզնկացու և Թլկուրանցու երգերի միջին տեղն է բռնում. նա մի տեսակ խառնուրդ է անում հեթանոսականի և քրիստոնէականի, արևելեանի և արևմտեանի, որի մէջ է և մեր հին սիրոյ երգի հրապոյրը:

Որ մեր բանաստեղծութիւնը աւելի շուտ է թօթափում միջնադարեան ոգին, դրա պատճառն անշուշտ ցեղի բնաւորութեան և իր հայրենիքի դրութեան մէջ պէտք է որոնել: Բացի արևմտեան քրիստոնեայ աղգերից, հայերը շրփուում էին և հեթանոսներին, արևելեան պարսիկներին և արաբների հետ. 13-րդ դարում Շահնաման երգւում և սիրով լսւում էր նոյնիսկ Սեպուհ սարի վանքերում: Շահնամայի չափը բանեցրել է և Գր. Նարեկացին, այլ և Կոստ. Երզնկացին, այն էլ իր եղբայրակից կրօնաւորների խնդրով՝ Շահնամայի ձայնով ոտանաւոր յօրինել: Բայց որ մեր բանաստեղծութիւնը փարթամ կերպով չի ուռճանում, առաջ բերելով խոշոր գրական երկեր, հանճարեղ անձեր, — դրա պատճառը պէտք է տեսնել մեր պատմական չարաբաստիկ կեանքի մէջ սկսած 11-րդ դարուց: Զարմանալ միայն կարելի է, թէ ինչպէս Սելջուկեան թուրքերի, Թաթարների տիրապետութեան շրջանում, նոյնիսկ Լանկթամուրի կոտորածներից յետոյ Օսմանցոց ու Պարսից դարաւոր պատերազմների, աւերմունքների ու կեղեքումների դա-

րերում հնարաւոր է լինում ոչ միայն պահպանել բանաստեղծութեան մէջ ձեռք բերած թեմաները, այլև նոր թեմաների մասին գրել, ինչպէս՝ պանդխտութեան, որ հին ժամանակներից մինչև այսօր մեր ժողովրդի ցաւերից մէկն է մնում և երգի առարկան, — այլ և նոյն նիւթերի մասին աւելի արուեստաւոր, ուժեղ և նորանոր կողմերից երգել: Աշխարհի ունայնութիւն, մահ, բնութիւն և սէր, ահա այն յաւիտեական անսպառ խնդիրները, որոնցով յուզւում են Մկրտիչ Նաղաշ, Քերովբէ, Թլկուրանցի և Աղթամարցի, ամեն մէկը իր ձևով, իր անհատական խառնուածքի համեմատ առանձին տեսակի յոյզի. վայելչութեան, ուրախութեան կամ տրտմութեան աղբիւր գտնելով այնտեղ: Այդ թեմաների զարգացումը մեր հին բանաստեղծութեան մէջ թողնելով, այստեղ միայն պիտի ասեմ որ այդ ամենքի մէջ էլ քրիստոնէութիւնն և հեթանոսութիւնը դեռ բոլորովին չեն հաշտուած. ինչքան էլ մարմին վաղուց տրուած է իր իրաւունքը՝ բանաստեղծները սէր ու բնութիւն են երգում, բայց հոգով հանգիստ չեն. նրանք յաճախ դողում են մահւան առաջ որ դժոխքն է բերում: Նրանք դեռ բոլորովին չեն կտրուած հին եկեղեցական հայեացքից, որովհետև այդպէս կը թուած են, և այդպէս թելադրում էր նրանց իրենց բարձր կոչումը՝ եպիսկոպոս և կաթողիկոս:

8.

Նոյն դարերում սակայն, 15-րդի վերջում, կամ 16-րդի սկզբում, վերջապէս իր զօրեղ ձայնն է բարձրացնում մեր ժողովրդական քնարերգութիւնը, և մենք Քուչաղ Նասապետի երգերի մէջ լսում ենք բուն ժողովրդական սիրոյ և բնութեան երգը, առանց որևէ կրօնական խառնուրդի: Քուչաղի երգերը ժողովրդական երգեր են, միայն ռանձնապէս մշակութիւն կրած:

Այս փոքրիկ քերթուածները, ինչպէս բուն ժողովրդական քառականները, տեղ չեն տալիս ոչ զգացմունքի և ոչ մտքի ընդարձակութիւնն ու ճապաղութիւնն, այլ ընդհակառակն միայն մի միտք են արտայայտում, սեղմ ու հակիրճ, բայց այնպէս բիւրեղացած ու փայլուն, որ երբեմն նոյնիսկ շլացուցիչ են իրենց նուրբ, սուր և համարձակ դարձուածներով, երևակայութեան յանկարծական վառ ու

շքեղ թոհններով: Սօսքի գիւտերն ու պատկերները երբեմն մեզ զուարճացնում են, երբեմն հիացում պատճառում, կամ ժպիտ յարուցանում իրենց սրամտութեամբ կամ միամիտ չարածիրութեամբ, և միշտ հրապուրիչ են իրենց սրտաբուխ թարմութեամբ:

Այս երգերը մշակող բանաստեղծը մեր երկրաւոր սիրոյ երգի մեծ վարպետն է, ինչպէս Գր. Նարեկացին երկնաւոր սիրոյ, երկուսն էլ բխած են ցեղի նոյն հանճարից ու ոգուց: Բայց մինչ Նարեկացու սէրը զղջման և անձնագաւջանքի բուռն արգելումն է, մի միատիկական մռայլ անձկութիւն, ձգտում աշխարհից կտրուելու և մարմինն ու աշխարհը ոչնչացնելու ինքնատանջի: հեծկլտացող թառանջներով, որոնք սարսուցնում են մեզ՝ տանելով մեզ միջնադարեան ճգնաւորի մթին խուցը հսկման ժամանակ, — Բուռն շաւին ընդհակառակն կապուած է միայն երկրին, զուարթ ու լուսաւոր, հեշտալից ու բուրաւէտ երկրին: մենք նրա հետ դիւրանում ենք քնքուշ և հաճելի երազանքներով: Սրտի խորքից դուրս թռած սիրոյ հառաչանքը նոյնիսկ մեզ օրօրում է մի անոյշ կարկաջով և տանում այն պարզ ու զեղչուկ կեանքը, այն ժպտուն բնութեան ծոցը, որից ծագել են սկզբնապէս այդ երգերը: Եւ մենք, կարծես, տեսնում և զգում ենք թարմ այգին ու սարը, գարնանային լուսաշող պարտէզը և պատանիների ու պատանուհիների զրօսանքն ու ուրախ երգը... մի երիտասարդական անհոգ կեանք, որ բոլորովին հեռու է թէ միստիկի տանջադին ոգուց և թէ մեր դարաւոր ազգային տառապանքից: Կարծես այդ երգիչը, իսկապէս երգիչներն և իրենց հասարակութիւնը, ինչպէս մանուկներ, ոչ մի ուրիշ ցաւ չեն ունեցել բացի իրենց առօրեայ կեանքի սիրոյ վշտից: Կարծես դրանով մեր բանաստեղծութիւնը վրէժ էր առնում դարաւոր ողբերից, իր այնքան սիրած «լալեաց բանաստեղծութիւնից»:

Մեր քնարերգութիւնն, այսպէս, երկնքից կատարելապէս իջել է արդէն երկրորդ, իրական աշխարհը: Եկեղեցական է երգիչը թէ աշխարհական, այդ այժմ այլևս այնքան նշանակութիւն չունի: Աշխարհի ոգին իշխում է: Բայց

որովհետեւ 16 և 17-րդ դարերում միակ ուսումնականը, չա սենք գրագէտը, դեռ եկեղեցականն է, ուստի այդ աշխարհիկ ոգու տեսութիւնը, երկրի առաւելութիւնն երկնքից հիմնաւորում է նոյն հոգևորականը, Ներսէս Մոկացի նշանաւոր կրօնաւոր վարդապետը, հիմնադիրը Լիմ անապատի վանքի (1622 թ.) Նա «Վիճարանութիւն երկնքի և երկրի» գեղեցիկ քերթուածի մէջ, այս երկուսի փառաւորութիւնը ցոյց տալուց յետոյ, առաւելութիւնը տալիս է երկրին, որի առաջ խոնարհում է նոյն իսկ երկինքը: Մենք ևս պիտի խոնարհենք երկրի առաջ, ասում է նա, որովհետեւ նա գեղեցիկ է, և մենք նրա ծնունդն են: այսօր նրա վրայ ման ենք գալիս, վաղը նրա ծոցը պիտի մտնենք: — Դա արդէն վերջ էր եկեղեցական-կրօնական ոգու և հայեացքի: Եւ ի՞նչ էր մնում այնուհետեւ մեր բանաստեղծութեանը զարգացնելու, որպէսզի հին հեթանոսական երգը կատարեալ լինէր: Դա խրախճանքի երգն էր:

9.

Նստեր է ծառին շքին,
Կը խմէ զիւր լուրջ ապիկին.
Կը խմէ ու հայերէն կասէ՝
Թի՛նչ անուշ է սէրն ու գինին:

Միստիկ ճգնաւորի հայեացքով այս բոլորն էլ մեծ մեղքեր էին. սէրն էլ, գինին էլ, երգն էլ, բնութիւնն էլ: Բայց փռչակի մէջ այդ բոլորը միացած են մի վայելչութեան համար: Դա է իսկապէս ուրախութեան երգը, որ հընազոյն ժամանակներում, տեսանք, եղել է մեր մէջ. երբեք չի դադարել գոյութիւն ունենալուց, որովհետեւ մարդիկ մարմնից են կազմուած: Բայց այդ երգը բաւական ուշ է արժանանում հոգևորականներից մշակութիւն կրելու, քանի որ պահք ու ծոմ պահողների և մարմինը քաղցով քան ուտել խմելը գովել:

Այստեղ էլ սկզբում օղնութեան է հասնում այլաբանաբար գովաբանւում են իբրեւ ս. հաղորդութեան մաս. ապա գինեխումի ու հացկերոյթի երգեր են երևան գալիս, ա-

ռանց որևէ նրբացման և խորութեան, լաւ ուտողի և լաւ խմողի սին պարծանքով, մինչև որ 17-րդ դարում Նաղաշ Յովնաթանի մէջ (1661—1722) այդ երգերն աւելի ազնուանում են, ստանալով միանգամայն և լուրջ բովանդակութիւն: Այստեղ քրիստոնէական ոգին և աշխարհասիրութիւնը հաշտուած են, ինչպէս արդի մարդու մէջ, և գիտակցօրէն վերջ է դրուած մեր հին բանաստեղծութեան ցաւագին շփոթին, որ կայ թլկուրանցու և Աղթամարցու մէջ: Այդ պատճառով և Յովնաթանի սիրոյ և ուրախութեան տաղերը մեր հին բանաստեղծութեան ամենից զուարթ և լուսաւոր երգերն են, որոնց մէջ կեանքի բճուանքն արտայայտւում է զօրեղ կերպով, միաձգամանակ և ազնիւ ու մաքուր: Ծնունդ 17-րդ դարու 80-ամեայ խաղաղութեան ժամանակի, նա ապրել է պարսից համեմատաբար բարւոյ կառավարութեան շրջանում արևելեան Հայաստանում մի լիառատ ժամանակ, որով և հասկանալի է նրա երգերի ուրախ և անդորր բնաւորութիւնը: Այդ ժամանակ և նոր պարսկական ազդեցութիւնը զօրանում է արևելեան հայերի վրայ, և սկսւում է նոր աշուղներ շրջանը: Յովնաթանը իսկապէս փակւում է հին երգիչների շրջանը՝ մի տեսակ միջին տեղ բռնելով հների և նորերի մէջ, բայց աւելի հներին պատկանելով, քան նորերին:

Արդարեւ, մինչև 19-րդ դարու մեր նոր գրականութիւնը դեռ հարիւր տարուց աւելի կայ, բայց 17-րդ դարի սկիզբներից արդէն, մեր կեանքի և մշակոյթի մեծ աւերումից յետոյ, սկսւում է մեր հին կեանքի վերածնութիւն թէ կեանքի և թէ գրականութեան մէջ: Մի երկրորդ անգամ էլ մեզնում ծաղկում է վանական կեանքը՝ նորոգելով հին կրօնական աշխարհայեցողութիւնը և ստեղծելով հնի նմանողութեամբ և դադափարներով մի նոր զրաբար գրականութիւն էլ միաժամին, Կ. Պոլսի և Մխիթարեանների միջոցով: Դա է որ յետագայում, 19-րդ դարու կէսերին, այս անգամ արդէն եւրոպական ազդեցութեամբ, կերպարանափոխւում է մեր նոր գրականութեանը: Սայաթ Նովան անա, այս վերածնութեան շրջանի ամենամեծ երգիչ աշուղը,

հենց այդ պատճառով իր աշխարհայեցողութեամբ դեռ 15-16-րդ դարերում է, քանի որ, իր մէջ կրելով վերածնութեան շրջանի ոգին, տատանւում է եկեղեցու և աշխարհի մէջ: Նա 1753 թուի մայիսի 1-ին, երբ ուրիշ երգիչները մէջ բնութեան զարթօնքը կը յարուցանէր սիրոյ, ֆիզիկական սիրոյ բռնկումը, գրում է.

Սայաթ Նովա, էրնեկ քեզ թէ էս անիս՝
Հոգուդ խաթրի մարմնուդ ումբըր կէս անիս,
Թէ գուզիս վուր դադաստան չը տեսանիս՝
Վանք սիրէ, անապատ սիրէ, քար սիրէ:

1758 թ. գրում է. «Թէ էս կենաց փառքն չուզիս՝ էն կենաց ալմասն կուտան...» բայց միաժամանակ աւելացնում է. «Թէ վուր հոգուդ կամքն իս անում՝ մարմինդ բէղամաղ է ըլում»:

Նաղաշ Յովնաթանին երբեք չէր տանջում այս միտքը: Նա ինքն ազատ ու հանգիստ խղճով «մարմնաւոր ուրախանում էր» առանց հոգուն փլասելու երկիւղի, և ուրիշներիին էլ շարունակ գրում էր՝ «մարմնով խըմէք ուրախացէք, հոգւով մեղաց զղջացէք»։ «մարմնաւոր ուրախացէք, հոգևորին մի կենայք ծոյլ»։ Հոգին ուրեմն իր պահանջներն ունի և նրան բաւականութիւն պիտի տալ բարի գործով, հոգևոր առաքինութիւններով. մարմինն էլ իր պահանջներն ունի, նրան էլ բաւականութիւն պիտի տալ ուտելով խմելով, երգելով ու պարելով, կին ու զինի սիրելով, այն էլ ճաշկաւոր կերպով, բնութեան գեղեցիկ ծոցին: Այս երկուսն այլ ևս իրար չեն խանգարում:

Բայց այդ ամենով հանդերձ՝ այն կողմում դեռ մնում են աշխարհի անցաւոր ունայնութիւնն և մահը: Գիտէք դարձեալ սոսկում է ազդում դա բանաստեղծին և թունաւորում նրա վայելչասիրութիւնը: Ամենին ոչ: Այլ, ընդհակառակն, դա պատճառ է դառնում աւելի ևս վայելելու այս կեանքը: Մի անգամ որ աշխարհն ունայն է, սուտ երազ, և մարմնաւոր ուրախութիւնը չի արգելուած, հետեաբար մարդ պէտք է, որքան կարելի է, շատ և ազնիւ կերպով վայելի այս աշխարհի դրախտային կեանքը, սէրն և ուրախութիւնը:

Վաղիւրն ոչ գիտեմք թէ զինչ ծնանի,
 Մարդուս կեանքն վայրի ծաղկի նմանի,
 Որ այսօր բացուել է՝ վաղիւն անցանի.
 Խըմենք, եղբարք գինի, մեզ անուշ լինի.
 Աձէք, խըմենք գինի, բանն Աստուած շինի:
 Այսպէս է երգում Յովնաթանը: Կամ թէ
 Այլ կեր խըմէ հետ ընկերաց,
 Գանի ֆըրսանդ կայ ձեռաց,
 Գալ տարի ուլ սաղ, ուլ մեռած.
 Խարճէք, եղբարք իմ, ցնծալով
 Ուրախութեամբ և պարելով,
 Ծափըս ծափի հարկանելով:

Եւ այսպէս ուրեմն մեր քնարերգութիւնը վերջապէս հաս-
 նում է իր սկզբնական հեթանոսական զուարթ և լուսաւոր-
 աղբիւրին, միայն քրիստոնէական հոգւով անցնելով՝ սւե-
 լի ազնիւ է, որովհետեւ մարմնաւոր հաճոյքը կիրքը, ֆի-
 զիկական վայելքը չէ, որ դառնում է կեանքի նպատակը:
 Մարդս, ինչքան էլ յարգում է մարմինը, նոյն իսկ խրախ-
 ճանքի մէջ չի մոռանում, որ հոգի էլ ունի:

Ապա այդ պատճառով նաև՝ մեր հին սիրոյ երգը, նոյն
 իսկ տարփալից վայրկեաններում, պարկեշտ, զգաստ
 և նուրբ է, երբեք բանբառակ, յայրատ ու պաղշոտ: Տե-
 սէք թէ՛ նահապետի երգերի մէջ մի սխալ և անպատշաճ
 խօսքի համար ինչպէս վիրաւորում է գեղուհին, և ինչպէս
 սիրահարն ամաչում է դրա համար և տանջուելով՝ զղջում է
 իր ասածին՝ համար և աշխատում հաւատացնել իր սիրոյ
 մաքրութեանն ու անկեղծութեանը: Կամ մի ուրիշ երգ, որի
 մէջ սիրահարը սիրականին խրատում է մաքրութիւն:

Ա՛յ իմ նշենի ծաղիկ, դեղնեցար ու դարձար ի նուշ,
 Բերանդ է փոքրիկ անուշ, պուկներդ է ամպրաւ ու նուշ,
 Այն օրն ի մօրէդ ծնար, դու լայիր՝ և ամէն խնդային:
 Հանց մաքուր ելի յաշխարհէս, թ' երկիր լայնա՝ դու ծիծաղիս:

Մաքրութիւն ուրեմն, ամենից առաջ զգաստու-
 թիւն: Եւ դա մեր հին քնարերգութեան էական յատկա-
 նիշն է: Բայց դա նաև մեր ազգային բնաւորութեան մի
 էական գիծն է, որ նոյնիսկ հեթանոսական բանաստեղծու-
 թեան և առասպելաբանութեան մէջ երևան է գալիս. մեծ
 Անահիտ տիկինը, որ է մայր ամենայն զգաստութեանց, նա
 է եղել «փառք ազգիս մերոյ և կեցուցիչ», «որով կեայ և
 կենդանութիւն կրէ երկիրս Հայոց»:

Հայ Գրողների Կովկ. Ընկերության հրատարակու
թիւները

1. Սայենթ-Նովայ 25 Կ.
2. Թիւրքական ժամանակակից գրողներ
Լ. Սայենթ 30 Կ.
3. Ընդհանուր տեսութիւն Հայոց Հին Բա-
նաստեղծութեան Մ. Արեղեանի . . . 30 Կ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0379951

62.804

89199.09
64-13